

Եթէ Յիսուս այսօր աշխարհ դալու լինէր, անշուշտ պիտի տակէր մեզ. — «Շատ տարօրինակ է, որ աղփասներն ու փոքր մարդիկն այդպէս մի կողմ են փռւած. իմ ժամանակ այդպէս չէր, եւ իսկապէս ես ոչ մի ժամանակ հարուսների եւ երկրի մեծերի կողմը չեմ բռնել»:

Մուսանդ Սարկաւազ.

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՅԻՆԵՐ

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՅԻ.

Պատիւիկ եկեղեցու քահանաները և բողոքական քարոզիչները սովորութիւն ունին հովուական այցելութեան դնալ իրանց ծխականների տները: Այս հանգամանքի վերայ առանձին ուշադրութիւն են դարձրել և օրթոդոքս քահանաներից ոմանք և մտածել են հետեւել այդ բարի օրինակին: Դոցանից մէկը այցելութեան գնացած լինելով իւր ծխականների մօտ, գրել է իւր տպաւորութիւնները, որ տպուեցան «Առաջնորդ գիւղական քահանաների» թերթում, և խիստ հետաքրքրական ու ուշադրաւ են: Նա գրում է. «Որ և է պատճառով, երբեմն էլ առանց պատճառի՝ երեկոյեանները, երբ գիւղացիք պարապմունք չեն ունենում, ես գնում եմ մի ծխականի տունը: Դեռ վառանջ չլինելով, թէ ի՞նչպէս կը վերաբերուին ծխականներն իմ այցելութիւններին, առաջին անգամները մի տեսակ շիտիմունքի մէջ էի: Բայց սրտազին ընդունելութիւն գտնելով, սկսեցի ինքս կնձ տիրապետել և յաճախ այդպիսի այցելութիւններ անել: Յորանից օգուտ կար թէ ինձ և թէ ծխականներին համար: Մտնում ես մի տուն, և քո առաջ բացւում է ընտանեկան ուրախութեան տեսարանը. մի ուրիշ տան՝ ծանր վշտի տեսարան՝ երբորդում՝ աղքատութիւն, չորրորդում՝ նոյն ընտանիքի անգամների մէջ խօսակցութիւն, կռիւներ ևն: Ինչպիսի ընդարձակ վայր է այդ հովուական գիտողութեան և օգնութեան համար: Պեանքի հետ հաշտեցնել անյաջողութեան և աղքատութեան

հանդիպածների կոտորուած որտեքը, խաղաղացնել նախանձով
այրուողներին, հոգևոր կեանքի հետաքրքրութիւն դարձեցնել
նոցա մէջ, որոնք շատ քիչ են մտածում այդ մասին—ինչ կա-
րող է հովուի համար սորանց աւելի մեծ և աւելի գեղեցիկ լի-
նել: Տեսնել թէ ինչպէս հոգևով մեռածները կենդանանում են
աչքերիդ առաջ, դա մի այնպիսի երանական զգացում է, որի
հետ շատ քիչ կը համեմատուի մի ուրիշը: Եթէ կարողանում
ես դու ծխականների վստահութիւնը գրաւել, նոքա բաց են
անում քո առաջ իրանց ամբողջ հոգին, որը պատրաստ է և
դու կարող ես առատութեամբ ցանել հաւատի սերմեր: Նկատել
եմ, որ այն ծխականները, որոնք առաջ շատ հաղիւ էին գալիս
եկեղեցի և մինչև իսկ չուզէնալով՝ այսպիսի հոգեկան զրուցա-
տրութիւնից յետոյ սկսում են յաճախ երեւալ. այսպէս, մի ծխա-
կան ասում էր. «Եթէ տէր հայրը ինքը անհանգստութիւն է
յանձն առնում գալու ինձ մօտ և խօսելու ինձ հետ, ես ինչո՞ւ
չպիտի գնամ եկեղեցի և լսեմ նորա ժամասացութիւնն ու նորա
խրատները»: Պատահում է երբեմն, որ ընտանիքներում զրու-
ցատրութեան ժամանակ ներկայ են լինում և ծերացած կամ
հիւանդ, թոյլ կամ որ և է մի անգամից բոլորովին զուրկ մար-
դիկ, որոնք չեն կարողանում եկեղեցի գնալ: Թէ ինչպիսի մը-
խիթարութիւն է սոցա համար տնային այս զրուցատրութիւնը,
հեշտ է եղրակացնել:

— Ռուսաց հասարակութեան մէջ ևս բազմացել են ամուս-
նալուծական և օրէնքից դուրս կենակցութեան վերաբերեալ
խնդիրները: Այսպէս, Արխանգելսկի հոգևոր ատեանը մտած գոր-
ծերից երեւում է, որ ամուսնական անհաւատարմութեան դէպ-
քերը տարէցտարի բազմապատկուում են և այդ չարիքը տա-
րածուած է ոչ միայն քաղաքացիների, այլ և գիւղական ժողո-
վուրդի մէջ, որը հնուց ճանաչուած էր իբրև բարոյական գա-
ղափարների խիստ պաշտպան: Այնքան շատացել են այս դէպ-
քերը, որ միմիայն մի գաւառում հաշուում են 20 տուն, ուր
իրենք տան տէրերն օրինաւոր ամուսնու հետ միաժամանակ պա-
հում են և անպսակ կանայք: Ի նկատի ունենալով այս հան-
գամանքը, հոգևոր ատեանը առաջադրել է քահանաներին՝ ամուս-
նական օրէնքից դուրս կեանք վարողների հետ մատնաւոր զրու-
ցատրութեամբ և եկեղեցական քարոզներով բացատրել ծխա-
կաններին ամուսնական կապի սրբութիւնն ու կարևորութիւնը.
ապա բաժանել նոցա «Տրոյիցեան թերթի» համարները, ուր
նոքա կը կարդան այդ նիւթին վերաբերեալ խրատներ: Քա-
ղաքական անկանոն կենակցութեան գործերը քննւում են դա-

տարաններում. այդ քննութիւնների ժամանակ բացուում են ներկայ ամուսնական կեանքի այնպիսի խոր վէրքեր և պարզուում են ամուսնութիւնից դուրս վարած կեանքի այնպիսի կողմեր, որոնք յուսահատեցնում են մարդու, և մինչև իսկ դէպի քրիստոնէական վարդապետութիւնն անտարբեր անձանց ստիպում են մտածել ու կարեկցութիւն ցոյց տալ: Բայց ո՞վ չի իմանում, որ դատարաններին հասնում է շատ չնչին մասն այն ընտանեկան երկպառակութեանց, որոնք կամաց կամաց քայքայում են հայրենական նահապետական օջախը:

— Կառավարչական հաղորդագրւիւն: — Արդէն վաղուց է որ Մակեդոնեայի քրիստոնէայ ազդաբնակչութիւնը չկարողանալով այլ ևս տանել տաճկական անգթութիւնները՝ զանազան գիւղերում և քաղաքներում ապստամբուեց և դէնքի դիմեց: Այդ ապստամբութեան դործին աւելի ևս նպաստեցին յեղափոխական դործիչները, որոնք Բուլղարիայից և Եւրոպայի զանազան կողմերից Մակեդոնիա գլխավոր, միացան տեղական ժողովրդի հետ և ապստամբութիւնը մեծ ծաւալ ստացաւ: Ի հարկէ, տաճկական կառավարութիւնը Եւրոպայի աչքին փոշի փչելու դիտումով յայտարարեց, թէ դա ապստամբութիւն չէ, այլ զանազան մարդկանց չարագործութեան հետեանք, որի պատճառով Մակեդոնեայի խաղաղ բնակչութիւնը դուր խլրտման մէջ է ընկել. միևնոյն ժամանակ բաշխեցողութիւններ ու կանոնաւոր զօրքերի վաշտեր ուղարկեց տեղն ու տեղը վերջացնելու այդ ապստամբութիւնը: Զօրքերն իրանց սովորութեան համաձայն կրակի ու սրի մատնեցին անմեղ բնակչութիւնը, այնպէս որ գիւղացիները թողնելով իրանց հայրենիքը, դիմեցին Բուլղարիա և Եւրոպական պետութիւնները հասկացան, որ դա զուտ ապստամբութիւն է և ծագել է երկրի դրութեան անհրաժեշտութիւնից, ուստի և խորհուրդ տուին տաճիկ կառավարութեան բարեփոխելու նրանց թշուառ վիճակը: Բալկանեան թերակղզում կատարուող այս վերգովնցուցիչ գէպքերը չէին կարող իրանց վրայ չընդաւրել Ռուսաց կառավարութեան ուշադրութիւնը, որը միշտ հոգացել է նրանց բարեկեցութեան համար. ուստի, ի նկատի ունենալով այս հանգամանքը, նա գլխի է Կ. Պոլսի իւր գեոպանի միջոցով Սուլթանին, որ Մակեդոնիայում մտքերը հանդարտեցնելու և բնակիչների վիճակը բարւոքելու համար անհրաժեշտ են այնպիսի բարեփոխութիւններ, որոնք պահանջում են հանգամանքները և ժողովրդի վիճակը: Բացի դորանից Ռուսաց կառավարութիւնը պատուիրեց նաև Մակեդոնիայի յեղափոխական կոմիտէին դադարեցնել իւր ագիտացիան, քանի որ այդ միջոցով ո՛չ մի նպա-

տակի չի կարելի հասնել: այլ ընդհակառակն առիթ է լինում, որ ժողովուրդը կրէ անագին զրկանքներ: Ռուսաց կառավարութիւնն արդէն քանիցս իւր կարծիքն է յայտնել Մակեդոնիայի դործերի վերաբերմամբ. նա պահանջում է որ Սուլթանը իրադործէ այն բարենորոգումները, որոնք զանազան ժողովներով արդէն յիշուած և որոշուած են: Միւս պետութիւնները համաձայն են այդ առաջարկութեան և իրանք իրանց կողմից ևս աշխատում են ի կատար ածել:

ԿԼԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Փարիզում «Ս. Մարտինի» անունով մի ընկերութիւն է հիմնուում, որի նպատակն է կաթոլիկութիւնը կառավարութեան յարձակումների դէմ պաշտպանել: Նոր ընկերութեան կազմի մէջ մտնում են զանազան դասակարգի մարդիկ. իսկ հիմնադիրներն են կոմսուհիներ և կոմսեր:

«Ներքէք, ասում է „Figaro“ լրագիրը, կաթոլիկ եկեղեցու ձեռնարկող ոգին այնպէս ակնյայտնի չի երևացել, ինչպէս փորձութեան օրերում: Կոմպի ձեռք առած խիստ միջոցները հազարաւոր անձնուրաց կոյսերի դործից յետ ձգեցին: Ի՞նչ անեն այս աղջիկները: Ներկայումս նոքա իրենց հայրենական տունն են վերադարձել և աղքատութեան մէջ են: Շատ վանքերում հարկաւոր եղաւ մահճակալներ տւելացնել, որպէս զի աքսորեալ կոյսերի համար տեղ բացուի: Հարիւրաւոր քոյրեր հարկադրուած կացարան են խնդրում բարի մարդկանցից: Շատերին էլ բարի մարդիկ իրենք են հիւրասիրում: Որպէս զի աքսորեալ խեղճ կոյսերին օգնեն և միևնոյն ժամանակ կաթոլիկական շատ ձեռնարկութիւններ կորստից ազատեն, ընկերութեան հիմնադիր թէ կանայք և թէ ազամարդիկ որոշել են չխնայել ոչ մի միջոց ուսուցանելու և հալածուածների վիճակը թեթեւացնելու համար: Հոգեւոր իշխանութիւնների օգնութեամբ նոքա մտադիր են շատ բարեգործական հաստատութիւններ հիմնել, ուր տարազրեալ քոյրերը կարողանան իրենց առաքելութիւնը շարունակել: Իւրաքանչիւր համայնքում ընկերութիւնը մի կոյս է նշանակում՝ նորան յանձնելով հիւանդների և կարօտեալների հոգացողութիւնը: Եթէ սլ. Կոմպը, իւր շարութիւնը յամառութեամբ առաջ տանելով, այդպիսի կոյսերին անթոյլատրելի աղանդ համարէ, այն ժամանակ, ինչ արած, ընկերութիւնը կհրամայէ կոյսին—քրոջը հանել կրօնաւորական սքեմը»: